Հայաստան, ք. Երևան 0010, Տիգրան Մեծի 4
4 Tigran Mets str., Yerevan 0010, Armenia
+374 60 464501, 464502
Info@ekeng.am
www.ekeng.am

ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏԻ ԸՆԹԵՐՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՈՒՂԵՑՈՒՅՑ

(Տարբերակ 1.5)

Բովանդակություն

1. Ներածություն ---------- 3

2. Տեխնիկական պահանջներ---------- 4

3. Նույնականացման քարտի ընթերցման ծրագրի տեղադրումը---------- 5

4. Լիցենզիայի տեղադրումը ---------- 6

5. Լիցենզիայի տրամադրումը և պահպանումը ---------- 8

6. Նույնականացման քարտի ընթերցման ծրագրի կիրառումը ---------- 9

7. Նույնականացման քարտի տվյալների արտահանումը և տպումը ---------- 11

8. Խնդիրներ---------- 12

9. Ծրագրի սպասարկման պայմաններ---------- 13

1. Ներածություն

Նույնականացման քարտի ընթերցման ծրագիրը (**Id Card Reader Software**) նախատեսված է նույնականացման քարտի տվյալների ընթերցման համար: Այն հնարավորություն է տալիս տեսնել քարտի տվյալները, արտահանել և տպել դրանք: Քարտի տվյալներին առնչվող որևէ փոփոխություն այս ծրագրի միջամտությամբ հնարավոր չէ իրականացնել:

2. Տեխնիկական պահանջներ

Ծրագրի տեխնիկական նվազագույն պահանջներն են.

- Windows7, Windows 8, Windows Server 8, Windows Server 8.1
- 512MB RAM
- Arian Amu տառատեսակ
- 8Mb ազատ տարածք .net framework 4-ի դեպքում, 400Mb՝ .net framework 3.5SP1-ի դեպքում

3. Նույնականացման քարտի ընթերցման ծրագրի տեղադրումը

Ծրագրի տեղադրման համար անհրաժեշտ է.



- Սեղմել **IdCardReaderSetup.exe** ֆայլի վրա:
- Բացված պատուհանում ընրել **Next>:**



- Այնուհետև ընտրում ենք տեղադրման **ուղին (path):**
- Դարձյալ սեղմում ենք **Next>:**

- Ծրագրի տեղադրումն ավարտելուց հետո հարկավոր է սեղմել **Close:**

4. Լիցենզիայի տեղադրումը



- **Id Card Reader** ծրագիրը բացվում է **Start** մենյուից՝ սեղմելով **Id Card Reader** վահանակի վրա:



- Ծրագրի մեկնարկից հետո բացվում է հետևյալ պատուհանը:



! *Ուշադրություն* – **Id Card Reader** ծրագիրն առանց լիցենզավորման աշխատում է 10 օր, որից հետո այն այլևս չի գործի: Լիցենզիայի ձեռք բերման համար անհրաժեշտ է սեղմել **License** կոճակի վրա:



Այնուհետև հարկավոր է ակտիվացման բանալին ուղարկել **ԷԿԵՆԳ ՓԲԸ**-ին:

Լիցենզիան ակտիվացնելու համար անհրաժեշտ է կրկին բացել **License** պատուհանը, սեղմել **Browse**, ընտրել լիցենզիոն **license** ֆայլը և սեղմել **Open**, որից հետո կրկին սեղմել **OK**:



☺ Լիցենզիան անհրաժեշտ է պահպանել համակարգչի հնարավորինս անվտանգ և ապահով տեղում, քանի որ այն մշտապես կիրառվելու է և կորցնելու կամ վնասելու դեպքում **Id Card Reader** ծրագիրը չի աշխատի:

5. Լիցենզիայի տրամադրումը և պահպանումը

Նույնականացման քարտի ընթերցման ծրագրի լիցենզիան տրամադրվում է **այն համակարգչի** համար, որում տեղադրվել է ծրագիրը և որից ուղարկվել է ակտիվացման բանալին:

Ուշադրություն Ակտիվացման բանալին գեներացվում է համակարգչում պարունակվող սարքավորումների հիման վրա՝ պրոցեսորի (CPU) և ցանցային քարտի (MAC հասցե):

Տվյալ սարքավորումներից որևէ մեկի փոխարինումը կարող է հանգեցնել լիցենզիայի խափանման, որի համար ԷԿԵՆԳ ՓԲԸ-ն որևէ պատասխանատվություն չի կրում:

Լիցենզիայի խափանումներից խուսափելու համար ցանկալի է ունենալ 1 ցանցային քարտ:

Արտոնագրային ֆայլը՝ լիցենզիան տրամադրվում է 1 տարի ժամկետով և համակարգչի որևէ վնասի կամ անսարքության դեպքում հնարավոր չէ վերականգնել կամ փոխարինել:

6. Նույնականացման քարտի ընթերցման ծրագրի կիրառումը

Նույնականացման քարտի տվյալները կարդալու համար անհրաժեշտ է նախապես միացնել քարտ կարդացող սարքը համակարգչին:

Եթե տվյալ համակարգչին միացված են մեկից ավելի կարդացող սարքեր, ապա սեղմելով **Կարդալ** կոճակը՝ բացվում է պատուհան, որտեղ անհրաժեշտ է ընտրել կարդացող սարքի մոդելը: Մոդելն ընտրելուց հետո անհրաժեշտ է սեղմել OK:



Կարդացող սարքի մոդելը պահպանվում է լռելյայն: Եթե նույնականացման քարտը տեղադրվել է այլ մոդելի սարքի մեջ, ապա Կարդալ կոճակը սեղմելիս բացվում է սխալի հետևյալ հաղորդագրությունը:



Այլ կարդացող սարք ընտրելու համար անհրաժեշտ է **Reader** մենյուից փոփոխել մոդելը:



Այնուհետև անհրաժեշտ է տեղադրել նույնականացման քարտը և սեղմել **Կարդալ/Read** կոճակի վրա:

Մաքրել դաշտերը/Reset կոճակի վրա սեղմելով՝ տեղադրված նույնականացման քարտի տվյալները վերանում են էկրանից (*տվյալները նույնականացման քարտում որևէ փոփոխության չեն ենթարկվում, միայն անհետանում են տվյալ պահին և **Կարդալ/Read** կոճակը սեղմելով՝ կարելի է կրկին կարդալ*):



Նույնականացման քարտի ընթերցման ծրագիրը ջնջելու (**Uninstall**) համար անհրաժեշտ է համակարգչի ղեկավարման վահանակից (**ControlPanel**) բացել ծրագրերը ջնջելու հատվածը

(Add or Remove Programs, Programs և այլն), ընտրել **ID CARD READER** և սեղմել **Uninstall**:

7. Նույնականացման քարտի տվյալների արտահանումը և տպումը



ID Card Reader ծրագրով նույնականացման քարտի տվյալներն արտահանելու (**export**) կամ տպելու (**Print**) համար անհրաժեշտ է քարտը տեղադրելուց հետո սեղմել **Կարդալ/Read** կոճակը, որից հետո սեղմել **Print** կոճակի վրա:

Բացվում է նոր պատուհան, որտեղ տվյալները կարելի է պահպանել **Excel**, **Pdf** կամ **Word** ֆայլերի տեսքով, ինչպես նաև տպել:

Տվյալները տպելու համար անհրաժեշտ է սեղմել **Print** կոճակի վրա, ընտրել համապատասխան տպիչը և տպել:

Տվյալներն արտահանելու համար անհրաժեշտ է սեղմել **Export** կոճակի վրա և ընտրել արտահանման ֆորմատը:

Ֆորմատն ընտրելուց հետո բացվում է **Save As** պատուհանը, որտեղ կարելի է տվյալ ֆայլին անվանում տալ՝ **Filename** տողում մուտքագրելով անվանում:

Տվյալներն արտահանվում են անգլերեն և հայերեն լեզուներով:



Հայերեն տառերի ընթերցման համար անհրաժեշտ է համակարգչում ունենալ Arial Amu տառատեսակը:

8. Խնդիրներ

Ծրագրի տեղադրման ընթացքում առաջացած հնարավոր խնդիրների դեպքում հարկավոր է.



- ✓ Սեղմել DotNetFX40 թղթապանակի վրա:



- ✓ Բացված պատուհանում ընտրել թողարկել՝ Запустить տարբերակը:

- ✓ Տեղադրել DotNet (.NET) ծրագիրը:

9. Ծրագրի սպասարկման պայմաններ

Ծրագրի օգտագործման սպասարկումն իրականացվում է յուրաքանչյուր աշխատանքային օր՝ 09:00-18:00:

(+374) 60 464 504

cssupport@ekeng.am

Խնդիրները կդիտարկվեն 1-5 աշխատանքային օրվա ընթացքում՝ ըստ տվյալ խնդրի բարդության:

Ծրագրի բարելավումների, փոփոխությունների, արդիականացման առաջարկները խնդրում ենք գրավոր ներկայացնել cssupport@ekeng.am էլեկտրոնային հասցեով:

Բողոքների դեպքում կարող եք դիմել info@ekeng.amև cssupport@ekeng.am էլեկտրոնային հասցեով: